ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » նոյեմբեր 2024թ. No 6705 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. NO. 8 ԿԱՋԻՊՈՒՐԱ, ԿՀԵԴԱ, 387411, ԳՈՒՋԱՐԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. NO. 8 ԿԱՋԻՊՈՒՐԱ, ԿՀԵԴԱ, 387411, ԳՈՒՋԱՐԱՏ, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՆՈ-ԴՈԼ ՖԼՅՈՒ , ՊԱՐԱՑԵՏԱՄՈԼ, ԿՈՖԵԻՆ, ՖԵՆԻԼԷՖՐԻՆ (ՖԵՆԻԼԷՖՐԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆ (ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆԻ ՄԱԼԵԱՏ) ԴԵՂԱՀԱՏԵՐ 500ՄԳ+30ՄԳ+5ՄԳ+2ՄԳ; (200/50X4/) ՍՏՐԻՊՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ և 17-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձաքննության 18.11.2024 թվականի N EL/01/3105-24 բացասական եզրակացությունը՝ Հնդկաստանի Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆլյու, պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ) դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 16227/1 առ 15.11.2024թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի հետգրանցումային փոփոխությունը մերժվում է, քանի որ դեղի որակը չի համապատասխանում հաստատված սպեցիֆիկացիային՝ «Կողմնակի խառնուրդներ» կետով: Հիմք՝ լաբորատոր փորձաքննության եզրակացություն R-2024-085; 23.10.2024թ.: Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի

27-րդ մասի 2-րդ կետի դեղի հետգրանցումային փոփոխությունը ենթակա չէ հաստատման:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հնդկաստանի Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆլյու, պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ) դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում» դեղի հետգրանցումային փոփոխության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157